չափ մեծարելի, որչափ բաղդաւոր են այս վերջինները իրանց մաքուր խղճմտանքով, իրանց վեհ սկզբունքներով. Հալածեցէք, ամբաստանեցէք, բռնակալէք, եթէ ձեր քարերդ ընկնի տապալեցէք ճշմարտութեան այդ անոյշ, անազատական ախոյեանին—բայց չէք կարող ձեռնամուխ լինել նրան փառք ու պատիւ բերող, նրան բաղդաւորացնող, նրան այդ անտեղի հալածանքների մէջ մխիթարող զօրութեանը—չէք կարող աքօղել նրա մաքուր խիղճը։ Սա մի անխիսմա է։

Գովել հայրենիքը, ազգը, կեղծել, շողոքորթել նրան ամէն տեղ, նրա վառը, պախարակելին—պակասութիւնը տեսնել ու լռել և գեռ դրա փոխարէն փառաբանել—այդ՝ ճշմարիտ մարդու համար հայրենասիրութեան նշանակ չէ. խօտուն անհասի բանականութիւնը դրան հայրենասէր, հայրենեաց յառաջդիմութեան ոխերիմ թշնամի կանուանի։ այսպէս էլ ամէն բանում։

Լուսաւորչականներից մի քանիսի պախարակելի գործը, անհամեմատելի ընթացքը յայտնաբանել, քարոզել, բողոքել այդ ամէնքին չի նշանակի —նրանց տալ, նրանց անպատուել, գաղտնի մաքուր ունենալ, ինչպէս կարծում են խաւարի որդիքը, որանց թւում և «Մեղուի» № 93-ի Երևանցին՝, որ իր նամակով մի աւելի սև, մի աւելի անպատիւ բիծ աւելացրեց, քան թէ նրանց պրպտացրեց։ Նա ցոյց տուեց թէ ինքը, որ լուսաւորչական է—մինչև անգամ 2×2 չորսին հաւասար լինելն էլ ժխտելու յանդգնութիւնն ու քաջութիւնը ունի. Նա աշխատում է ջրել այն լոյսի պէս պայծառ իրողութիւնը, ինչպէս Արզումանի ու ծերունի Ասատուրի գանգատները է, որին ամբողջ Երևանը կը վկայէ։

Ես գրել էի «Մշակի» № 199-ում, որ Արզումանին ծեծեցին արհեստաւորներում ամէն մէկը մի մի բան, դագանակ, գերան, կացին, ուրագ վերցրած (այսինքն ինչ որ ձեռքներն ընկաւ)։ «Մեղուի» պ. Երևանցին իմ այդ—իր խելքով—մեծ սխալը ուղղում է ասելով, որ նրանք ուրագով ու կացնով չը ծեծեցին, այլ փայտով ու դագանակով։ Երևելի հանձար, բայց աւելի բանկար։ Դրանից յետոյ յանդգնում է այդ երևելի հանձարը ասա համարել ծերունի Ասատուրին ծեծելը, այն ինչ այսօր էլ նրան ծեծողներից շատերը դեռ կենդանի են և կը վկայեն, եթէ հարցնելու լինի պ. Երևանցին—եթէ ինքն էլ չէ եղել նրանց—ծեծողների թւում։ Երևանցին՝ Ասատուրի սպանումը կրօնական մոլեռանդութիւնը չէ վերաբերում, այլ նրա բարեկամների (դեռ մէկն էլ քահանայ) փողի հաշիւներին.—կոյր պաշտպանութիւն։ Էշը չի, էշի պոչն ա—կասեն դրան։

«Մեղուի» պ. Երևանցին իմ ասածները հակառակ իր կամքի աւելի նա հաստատելուց յետոյ, ինձ ասախոս, դաղտամիտ և այլն համարելուց յետոյ, յանդգնում է «ազնիւ բարեկամ» անուանել. այն ինչ ես այդ մեղուականին, յատուկ ասիական շողոքորթութիւնը իրան յետ վերադարձնելուց յետոյ, յայտնում եմ, որ այդ պիսիներին ոչ թէ հրաւիրամ, այլ ճանաչել անգամ չեմ կամենում, քանի որ նա էլ—ինչպէս իր նամակից երևում է—մոլեռանդ հայրենասէրներից է, քանի որ նա բուլվարային patriotների խմբից է. քանի որ նա չափազանց զարմանում է, որ պ. Գրիգոր Արծրունին ճշմարտութեան պաշտպան է. ազնիւ, իրկայական բարեկամ։ Աչքներդ բաց արէք, պարոններ, սուսկացէք ապազայից, որ մեղուական աչքերով ձեր քայլերը դիտում է. սուսկացէք—ասում եմ—որովհետև խիստ և անկողմնապահ է ժամանակի դատաստանը։

Վ. բոյր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Երևան, 9 հոկտ.

«Մշակի» 214 №-ի մէջ «Նորայր» ստորագրութիւնով թղթակցութեան այն կտորը, որ վերաբերում է Սահականուշեան դպրոցի վիճակարկութեան միջոցին օգտող մեծ. տիկիններին և օրիորդներին, լրիւ չէ. վասնզի չը փոխէ ինչու է մոռացել պ. Նորայրը մեծ. տ. տ. Վարուհի Մելիք-Աղամալեանի և իր քոյր օրիորդ Մարիամ Գեղամեանի անունները, որք ամենից աւելի աշխատողներն էին վիճակի ժամանակ և ինչու չէ յիշել նոյնպէս տիկին Տիրուհի Մելիք-Աղամալեանի և տիկին Անանէ Զորգանեանցի անունները, որք խանութից խանութ շրջելով ինձ հետ ժողովեցին բաւականին իրեղէններ և վիճակի ժամանակ ամենամեծ ջերմեռանդութիւնով կատարեցին իրանց պարտքը, իբրև հոգաբարձուհիք նոյն զրպրցի։—Մի և նոյն յօդուածի մէջ ասած է «Ս. Վ. չարաթական 80 դաս ունէր». բայց ինձ յայտնի է որ նա միայն 30 դաս ունէր։ Երբի տեսաչ Սահականուշեան օր. զրպրցի, յայտնում եմ հրապարակաւ իմ խորին շնորհակալութիւնը բոլոր այն անձինքներին, որ չը զլացան իրանցից խնդրածս թէ նուէրները և թէ աջակցութիւնը յօդուտ նոյն զրպրցին՝ վիճակախաղի նվիրատուներ։ Շնորհակալ եմ նաև պ. Աղէքսանդր Մելիք-Աղամալեանից, որ բարեհաճեց ընդունել իմ մաքերան խնդիրը և նուիրել իր քարվանսարայի 10 ամաւան վարձը, 700 բուբլի, յօդուտ նոյն զրպրցի։

Ցաւ Աստուած որ՝ շատերը հետևէին պ. Մելիք-Աղամալեանի օրինակին։

Պարսն խմբագիր, մեծայոյս եմ, որ այս մի քանի խօսքին տեղի կը շնորհէք «Մշակի» յառաջագայ համարում։

Սարգիս Բէգ-Նազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պետերբուրգից տասանչաք պ. Բաղդասար Խոջայեանցից 25 բուբլ յօդուտ Կ. Պոլսի «Միացեալ ընկերութեան»։

—

Աղէքսանդրապոլի Նշանգի Եաուլ գիւղի բնակիչ Աղէքսէյ Յովհաննէսեան Մելիք-Սարգիսեանց ուղարկել է մեր խմբագրութեանը 100 բուբլ յօդուտ Վանի սովատանջների։

—

Մի ումն Մոսկվայից ուղարկել է մեզ 20 բուբլ։ որից 10 բուբլ յօդուտ Վանի սովեալների, իսկ 10 բուբլ յօդուտ «Միացեալ ընկերութեան»։

—

Հինգշաբթի, 18-ին դեկտեմբերի Արծրունու թատրոնում յօդուտ Թիֆլիսի իգական գիմնազիայի չքաւոր աշակերտուհիների տուած կօնցերտը շատ լաւ աջողվեց։ Թատրոնը լի էր, բոլոր տեղերը բռնված էին և դարձեալ պահանջում էին տոմսակներ։ Շատերը վճարեցին որ կարողանան նստել անցքերում, կամ մինչև անգամ կանգնել։ Տիկիններ Պավլովսկայա, Մախվից և Դէկարս մեծ ծառայութիւններ տուցին։ Հասարակութիւնը անդգար կրկնել էր տալիս նրանց։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են թէ այդտեղի հայ հասարակութիւնը ընդհանրապէս շատ ոգևորված է նուիրատուութիւնների համար թիւրքայ Հայաստանի կարօտեալների օգտին, բայց չը կայ մի ընդունակ մարդ, որ հանդէս դուրս բերէ։ այսպէս պարզուրեա և օգուտ քաղէր ժողովրդի տրամադրութենից, չը թողնելով որ ամիսներ անցնեն մի այսպիսի մեծ ճգնաժամին։ Հրաւիրում ենք Մոսկվայի հայ հասարակութեան անդամներին թողնել այդ նշանաւոր բաղում հային ազգային յատկութիւնները՝ փոխադարձ անհաւատարմութիւնը և նախանձը և համերաշխ կերպով գործել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Լօնդոնի ,,Standard'' լրագրին Աթէնքից հաղորդում են դեկտեմբերի 13-ից։ Նոր-Բրում Աթէնք ժամանած ռուսաց դեսպան պ. Շիսկին առաջին տեսութիւն ունեցաւ արտաքին գործերի մինիստր պ. Կումունդուրոսի հետ և այդ տեսութեան մի քանի մանրամասնները ես միջոց ունեմ ձեզ հաղորդելու համար։ Ռուսաց դեսպանը իսկապէս նոյնն ասաց, ինչ որ մի քանի անգամ կրկնել են Ֆոնրադովից և Ֆրանսիական դեսպան կոմս դը-Միւլի։ Այսուհետ նրա կատարում են, որ Եւրոպական դիպլոմատիայի ներկայացուցիչները հաւաքվում են Աթէնքի մէջ գտնելու համար այն համաձայնութիւնը, որ, ինչպէս երևում է, չը կայ այլ մոլորաքաղաքների մէջ։ Կերմանական և Ֆրանսիական դեսպանների օրինակին հետևելով, ռուսաց դեսպանն էլ յայտնեց արտաքին գործերի մինիստրին ռուսաց Թագաւորի բարի ցանկութիւնները յունական Թագաւորին և նրա գործին, և մի և նոյն ժամանակ աւելացրեց յիշեալ դեսպանների նման, որ յունական կառավարութեան համար անհրաժեշտ է խոհեմ և չափաւոր լինել։ Կումունդուրոս շնորհակալութիւն արաւ յայտնած բարի ցանկութիւնների համար և մի և նոյն ժամանակ հարցրեց, արդիօք կարող է Ռուսաստանը իր առաջարկած համերաշխեան չափերը սահմանել։ ,,Միթէ, ասաց նա, Ռուսաստանը այդ խորհուրդները պէտք է ձեռք բերի իր արած պատերազմական ծախսերի գնով, որ այժմեան հանգամանքներում երկրի կեանքն է կազմում։ Ով կը խոստանայ մեզ և գրաւական կը դնի, որ պետութիւնները երբ և իցէ կը համաձայնեն և կերազործեն իրանց սեփական վճիռը։ Հանաք բան չէ խոստումներով կերակրել մի փոքրիկ ազգութեան, որի յոյսերը երեք տարիների ընթացքում ի դերև են անցնում և որի արդարացի պահանջները դիպլոմատիան վիճելի է դարձնում։“ Շարունակելով իր խօսքը, յունական մինիստրը աշխատում էր ապացուցանել ռուսաց դեսպանին, որ այժմ հիշատ չէ հետևել նրա խորհուրդներին, որովհետև օրից օր մեծանում են երկրի ֆինանսական դժուարութիւնները, որոնք վերջ ի վերջոյ կարող են Ռուսաստանին կոծոտի անդունդը հասցնել։ Ոչ մի կառավարութիւն, ասել է մինիստրը, չէ կարող կապել ձեռքերը մի ազգութեան, որ ոգևորված է ամբողջ Եւրոպայի հանդիսաւոր վճիռներից և համակրական ցոյցերից, որ իր բոլոր դրամական միջոցները պատերազմական պատրաստութիւնների համար է ծախսել։ Ռուսաստանը զոհեց իր արդիւնաբերական բոլոր ոյժերը, որ իր դարեւոր ցանկութիւնները իրագործի և միացնի Լպիրոս և Թէսալիա, իր մարմնի անջատված երկու մասերը։ Ջարաբադարար Ռուսաստանը այլ ևս չէ կարող սպասել Եւրոպայի վերջնական խաչակիր պատերազմին թիւրքիայի դէմ։ Նա սոխված է իր վիճակը գենքի ոյժով որոշելու։“

Նոյն տեղից ,,Polit. Corresp.'' լրագրին հաղորդում են նոյեմբերի 27-ից։ Այժմ ամենքը խօսում են այն այցելութիւնների մասին, որ արին Կումունդուրոսին գերմանական դեսպան Ֆոն-բրաղվից և Ֆրանսիական կոմս դը-Միւլի։ Պ. Բաղվից, որ դիտաւորութիւն ունէր Աթէնքի մէջ միայն երկու շաբաթ մնալ և այնուհետև Ս. Պետերբուրգ մեկնելու, նախագահաց Կումունդուրոսին այնպիսի գործողութիւններից, որոնք կարող են սպառնալ յունական շահերին։ Նա մասնաւորապէս ուշ այն դժուարութիւնների վրա, որոնք Եւրոպայի առաջ են գալիս, երբ նա կամենում է իրագործել Բերլինի դաշնագիրը, բայց ասաց, որ այնուամենայնիւ Գերմանիան դիտաւորութիւն ունի յարմար ժամանակ գտնել այդ դաշնագիրը իրագործելու համար։ Այդ ձեռով Եւրոպական համաձայնութիւնը շատ լաւ գործական կարող է լինել։ Կումունդուրոս պատասխանել է, թէ Ռուսաստանը այդ համաձայնութեանն է պարտական, որ այժմ նրա ցանկութիւնները և պահանջները հաստատված են և նրանից է օգնութիւն սպասում։ Ռուսական կառավարութիւնը մտադիր է այդ վճիռը իր վերջնական նպատակը համարել և այդ նպատակին հասնելու համար, Կումունդուրոսի կարծիքով, ամենալաւ միջոցն է պատերազմական պատրաստութիւններ տեսնել և կազմակերպել յունական զօրքերը։ Ռուսաստանը վերջին տարիների ընթացքում թոյլ էր տուել, որ պետութիւնները ազատ գործեն, բայց քանի որ նրանք կատարել են իրանց վճիռը, ուրեմն յունական կառավարութիւնը պէտք է ձգտի իրագործել այդ վճիռը։ Ռուսաստանի պատիւը պահանջում է, որ նա իրագործէ Եւրոպայի վճիռը։ Բացի այդ Ռուսաստանը այնքան ծախսեր է արել և թոյլ է տուել, որ ժողովուրդի պատերազմական ձգտումները մինչ այն ատիճան զարթեն, որ այլ ևս անկարելի է յետ կանգնել։

Նոյն օրը պատգամաւորների ժողովի մի մասնաժողով ներկայացաւ Թագաւորին գահական ճառի պատասխանը յանձնելու համար։ Սա այնպիսի ճառ արտասանեց մասնաժողովի ներկայութեամբ, որ հաստատում է գահական ճառը և որ Բաղվիցին կոշտնակի մի պատասխան կարելի է համարել։ Թագաւորը առաջարկեց պատգամաւորների ժողովին շտապով վերջացնել պատերազմական պատրաստութիւնները և զօրքերի կազմակերպելը, որովհետև դրանք միակ միջոց են ներկայացնում Բերլինի կոնֆերենցիայի վճիռը իրագործելու համար։

ԱՍՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Վիէննայից լրագիրներին հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները։ Որովհետև Աւստրօ-Ունգարիան բնակեցրած է գանազան ցեղերով և տարբերով, նա միշտ վերզոփում է, միշտ անբաւական է և միշտ ցոյցեր է անում երբեմն այս և երբեմն այն կուսակցութեան օգտին։

Այժմեան հակագերմանական մինիստրութենից չափազանց անբաւական գերմանացիները պատրաստվում են «բուն գերմանական» կայսր Յոզեֆ II-ի գահ բարձրանալու 100 ամեայ յօբելեանը տօնել։ Կղերականները առելով այդ ազատամիտ և եղբարասէրների թշնամի Թագաւորին, զգալով իրանց ժամանակաւոր ոյժը Աւստրիայի մէջ, աշխատում են ազատամիտների դէմ ուղղված ցոյցեր անել։ Գերմանական ժողովուրդը, վրդովված կղերականների անհամբերողութիւնից, Յոզեֆի փայլի տօնը կամենում է շքեղութեամբ կատարել և դրանով հակակրոնական ցոյցեր անել։ Գերմանացիների հետ միանում են ռուսները, իսկ մեացած սլավեանները անտարբերութեամբ են վերաբերվում դէպի այդ ազգասիրական տօնը։ Լեհացիները, այժմեան կառավարութենից բաւական լինելով, տօնում են 1830 թուականի յեղափոխութիւնը։ Այս բոլոր անցքերի հետ միաժամանակ բացվում է աւստրիական պարլամենտը, որ ընդարձակ ասպարէզ է ներկայացնում կուսակցական կռիւների համար։ Ֆինանսների մինիստրը առաջարկում է իր բիւդժեաը։ Չեխերը և կղերականները նրան չեն հաւանում, իսկ գերմանացիները խիստ կրիտիկայի են ենթարկում։

Անկարելի է որոշել, թէ որ կուսակցութիւնն է իրաւացի, միայն թէ յայտնի է, որ եկող տարվայ համար 34,500,000 գուլդեն դեֆիցիտ կայ և այդ դեֆիցիտը լրացնելու համար հարկաւոր է ազգաբնակութիւնը նոր հարկերով ծանրաբեռնել։

Ունգարական լրագիրները խորհուրդ են տալիս իրանց մինիստրութենանը օգուտ քաղել Աւստրիայի ներքին երկպառակութիւններից և Ունգարիայի համար նոր պատուութիւններ ձեռք բերել։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ